ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

09.02.2021 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյան, Թ. Ստեփանյան, Գ. Ալեքսանյան, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԽ նախագահ Լ. Մադաթյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Խոջումյանը, Ա. Ղարախանյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյանը, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստին հրավիրված էին Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ Հ. Ազիզյանը, ասիստենտ Լ. Լաչիկյանը, Ս. Սաֆարյանը և ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. I կիսամյակում իրականացված հետազոտական բաղադրիչի ներդրման արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում/ Զեկ. Մ. Միքաեյլյան, Գ. Հովհաննիսյան/;
2. Իրականացված պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում և II կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաղորդում / Զեկ. Ա. Ալեքսանյան, Ա. Ուլիխանյան, Հ. Ազիզյան, Պ. Ասիլբեկյան/:
3. 2020-2021 ուստարվա II կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
4. Ընթացիկ հարցեր.

   4. 1. Գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով ԵՊՀ ԻՄ «Տավուշ» գիտահետազոտական կենտրոնի մրցութային հանձնաժողովում ֆակուլտետի ներկայացուցչի առաջադրում / Զեկ. Գ. Ավետիսյան/:

Բաց քվեարկությամբ 15 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 5/1

¬ Հաստատել նիստի օրակարգը:

1. Լսեցին- I կիսամյակում իրականացված հետազոտական բաղադրիչի ներդրման արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների մասին /Զեկ. Մ. Միքաելյան, Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանը ներկայացրեց Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի հետազոտական բաղադրիչով դասընթացների առաջին կիսամյակի արդյունքները: Նա նշեց, որ առաջին կիսամյակում ամբիոնում անցկացվել են հետազոտական բաղադրիչով հետևյալ դասընթացները՝ Միկրոտնտեսագիտություն, ֆինանսների կառավարում և Կորպորատիվ ֆինանսների հիմունքներ: Արձանագրվել է հետևյալ պատկերը՝ ընդհանուր առմամբ, արդարացված է որոշակի դասընթացներում հետազոտական բաղադրիչների կիրառումը: Ուսանողները հիմնականում բարեխղճորեն կատարել են հետազոտական աշխատանքը: Սակայն, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով որոշակի թերակատարում և բացթողումներ են եղել.

- Բավարար չէ հետազոտական բաղադրիչին հատկացված ժամաքանակը
- Բավարար չէ նախնական գիտելիքների մակարդակը
- Ձևական է որոշ ուսանողների ներգրավվածությունը խմբային աշխատանքներում

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի հետազոտական բաղադրիչով դասընթացների առաջին կիսամյակի արդյունքները: Առաջին կիսամյակում 3-րդ կուրսում հետազոտական բաղադրիչ առկա է եղել երկու դասընթացներում, իսկ 4-րդ կուրսում՝ չորս դասընթացներում: Հետազոտական աշխատանքների իրականացման համար

կարևոր նշանակություն ունի առկա ժամանակացույցը։ Դասախոսների և ուսանողների պարբերաբար հանդիպումները նպաստում են անհասկանալի հարցերի լուսաբանմանը։ Ուսանողները ներկայացնում են, թե ինչ աշխատանքներ են իրականացրել և ինչ բացթողումներ կան։ Որպես նկատառում. ուսանողները փորձառու չեն գիտահետազոտական աշխատանք կատարելու ասպարեզում, այդ իսկ պատճառով հետազոտական տարրեր կարելի է մտցնել բոլոր դասընթացների համար։ Հետազոտական բաղադրիչում տեղ գտած տարածված թերություն է շարադրելու տեխնիկային չտիրապետելը, մասնավորապես շատ ուսանողներ հղումները սխալ են նշում։ Հնարավոր է հետազոտական աշխատանքներում փոփոխություններ մտցնել ծավալի վերաբերյալ։ Երկրում ստեղծված իրադրությամբ պայմանավորված ուսանողների հետազոտական աշխատանքներում կային թերություններ, սակայն իրականացվել է տեսական նյութի ամբողջական ուսումնասիրում։

Արտահայտվեցին. - Գ. Ալեքսանյանը, Թ. Ստեփանյանը։

Գ. Ալեքսանյանը նշեց հետազոտական բաղադրիչի առավելությունները և թերությունները։ Կիսվեց իր փորձով և առաջարկեց թեմաները ընտրել ըստ ուսանողների կարողությունների, ինչպես նաև հաշվի առնել տարածաշրջանի առանձնահատկությունը։

Թ. Ստեփանյանը հաղորդեց, որ Տավուշի մարզպետարանի ռազմավարական ծրագրում ներառված են մարզի զարգացման 26 ուղղություն, որոնցում կա հետազոտության անհրաժեշտություն։ Նա առաջարկեց դասախոսների և ուսանողների ներգրավվություն ու համագործակցում, որն էլ փոխշահավետ կլինի թե մարզի զարգացման, թե ուսանողների հետոզատական աշխատանքների կատարման գործում։

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - I կիսամյակում իրականացված հետազոտական բաղադրիչի ներդրման արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին. - Իրականացված պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում և II կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաղորդում /Զեկ. Ա. Ալեքսանյան, Ա. Ուլիխանյան, Հ. Ազիզյան, Պ. Ասիլբեկյան/:

Ա. Ալեքսանյանը հաղորդեց Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության արտադրական պրակտիկայի մասին: Պայմանավորված երկրում ստեղծված իրավիճակով՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Ֆինանսներ» մասնագիտության III կուրսի արտադրական պրակտիկան անցկացվել է ս.թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 22-ը ընկած ժամանակահատվածում: Մասնակցել է 17 ուսանող: Պրակտիկան իրականացվել է ուսումնական պլանի համաձայն: Պրակտիկան կազմակերպվել է ՀՀ գործող բանկերի Տավուշի մասնաճյուղերում (4 ուսանող), Տավուշի մարզպետարանում (2 ուսանող), Իջևանի և Դիլիջանի քաղաքապետարաններում (3 ուսանող), ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունում (1 ուսանող), Իջևանի Բենտոնիտ կոմբինատում (3 ուսանող), 1 ուսանող իր պրակտիկան անցկացրել է Զբաղվածության պետական ծառայության գործակալության Իջևանի զբաղվածության մարզային կենտրոնում, ԵՊՀ ԻՄ –ում պրակտիկա է անցել 2 ուսանող, իսկ մեկ ուսանող՝ Այգեհովիտի ԱԱՊԿ ՊՈԱԿ- ում:

Պրակտիկայի ողջ ժամանակահատվածում համագործակցել ենք կազմակերպությունների ղեկավարների հետ, իրականացրել ենք ընթացիկ

գնահատման աշխատանքներ: Հիմնարկության կողմից կցված պրակտիկայի ղեկավարները դրական են բնութագրել ուսանողներին՝ ընդգծելով նրանց տեսական պատրաստվածության բավարար մակարդակը:

Պրակտիկայի պաշտպանությունը տեղի է ունեցել հեռավար՝ Zoom հավելվածի միջոցով, ուսանողները սլայդերի միջոցով ներկայացրել են պրակտիկայի ընթացքում իրենց կատարած աշխատանքները:

Ա. Ալեքսանյանը ներկայացրեց նաև հեռակա ուսուցմամբ սովորող Տնտեսագիտության տեսություն V կուրսի արտադրական պրակտիկայի հաշվետվությունը: Նա նշեց, որ արտադրական պրակտիկան, պայմանավորված երկրում ստեղծված իրավիճակով /համավարակն ու Արցախյան պատերազմը/, անցկացվել է հեռավար: Պրակտիկան տեղի է ունեցել ըստ նախատեսված ժամանակացույցի, 2020թ. դեկտեմբերի 1-26-ը, որին մասնակցել են 45 ուսանող: Պրակտիկան իրականացվել է կրթական ծրագրի համաձայն: V կուրսի 45 ուսանողից ձևավորել ենք խմբեր, որոնք նախընտրել են իրենց ուսումնասիրման վայրերը: Յուրաքանչյուր խումբ ուսումնասիրել է իր նախընտրածը՝ քաղաքապետարան, բանկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություններ:

Նա նշեց, որ պրակտիկայի ընթացքում քննարկվել և լուծումներ են տրվել բոլոր հարցերին, որոնք առաջացել են ուսանողների մոտ:

«Զբոսաշրջություն» մասնագիտության հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի վերաբերյալ հաղորդում ներկայացրեց Պ. Ասլբեկյանը: Նա նշեց, որ համավարակի պատճառով, ինչպես նաև հեռակա ուսուցման հանգամանքով պայմանավորված հնարավոր չի լինելու լիարժեք ու ողջ խորությամբ իրականացնել ուսումնական պրակտիկան: Նրա ծրագրում շեշտը դրվել է, այսպես կոչված, վիրտուալ ճանապարհորդության վրա: Ելնելով վերոգրյալից՝ բնականաբար փոխվել է պրակտիկայի իրականացման գործիքակազմը, որն իր մեջ առավելապես ներառում է համացանցային կայքէջերի և տեսանյութերի ուսումնասիրությունը,

համեմատումն ու վերլուծաբար ներկայացումը: Ավելին՝ ուսանողներին հանձնարարվել է ինքնուրույնաբար ստեղծել իրենց բնակության վայրերի զբոսաշրջային օբյեկտների ներքին ու արտաքին միջավայրերի նկարագրությունն ու դրանց հագեցումը լուսանկարային նկարազարդումներով: Այս կերպ խրախուսվում է պրակտիկայի մասնակցի հետազոտական աշխատանքը՝ միաժամանակ նպաստելով նրա հայրենաճանաչությանը:

Հ. Ազիզյանը, Լ. Լաչիկյանը հաղորդեցին, որ «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ նախատեսված պրակտիկան իրականացվելու է հիբրիդային եղանակով:

Արտահայտվեցին. - Գ. Հովհաննիսյանը, Գ. Ալեքսանյանը:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ պրակտիկայի ղեկավարը պետք է ունենա ծրագիր՝ փոխհանաձայնեցված պրակտիկայի վայրի ղեկավարի հետ: Ուսանողը արտադրական պրակտիկայի ընթացքում կձևավորի որոշակի կոմպետենցիաներ, ինչպես նաև ձեռք կբերի տվյալներ, որոնք անհրաժեշտ է կլինեն ավարտական աշխատանքները պատշաճ ներկայացնելու համար:

Գ. Ալեքսանյանը նշեց, որ ուսումնական պրակտիկան կարող է իրականացվել հեռավար, օրինակ՝ կազմակերպել վիրտուալ ճանապարհորդություն: Նա նշեց, որ եթե պրակտիկայի ժամանակաշրջանը բաշխվի ըստ սեզոնների, ապա ծառայությունների տարբերություններն ու առանձնահատկությունները ուսանողին կարելի է ցույց տալ առավել պատկերավոր: Միաժամանակ հեռավար տարբերակով իրականացումը ևս անհրաժեշտ է կրթական հաստատությունների համար, որովհետև այն հնարավորություն կտա կատարելագործել նաև օնլայն գործիքների կազմը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Իրականացված պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացումը ընդունել ի գիտություն:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - II կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաղորդումը հիմք ընդունել:

3. Լսեցին. - 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրման մասին/ Ձեկ. Գ. Ավետիսյան/:

Դեկանը հիշեցրեց, որ մասնաճյուղում գործում է անվանական կրթաթոշակի նշանակման կարգ: Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի բաժին 4-ի 34 կետով՝ առաջարկվում է «ԵՊՀ » անվանական կրթաթոշակի ներկայացնել Զբոսաշրջություն II կուրսի ուսանողուհի Լաուրա Ուլիխանյանին /ցուցաբերել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանցություն և հասարակական ակտիվություն/, «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի ներկայացնել Ֆինանսներ / ըստ ոլորտի/ IV կուրսի ուսանողուհի Լուիզա Մադաթյանին /ցուցաբերել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանցություն և հասարակական ակտիվություն/, «Սահակ Ձորափորեցի» անվանական կրթաթոշակի՝ Զբոսաշրջություն II կուրսի ուսանողուհի Իննա Ենգիբարյանին /ցուցաբերել է հինգ կիսամյակ անընդմեջ գերազանցություն/: Իսկ «Վազգեն Սարգսյան», «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակների մասնաճյուղային մրցույթին առաջարկվում է ներկայացնել Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության III կուրսի ուսանողուհի Իրա Վարդանյանին և Ֆինանսներ /ըստ ոլորտի/ մասնագիտության III կուրսի ուսանողուհի Դիանա Սանթրոսյանին:

Արտահայտվեցին. - Ա. Պոտոսյանը, Մ. Միքայելյանը

Արտահայտվողները նշեցին, անվանական կրթաթոշակի ներկայացված վերոհիշյալ ուսանողները արժանի են ոչ միայն ցուցաբերած ակադեմիական

առաջադիմությամբ, այլ նաև հասարակական ակտիվությամբ ու օրինակելի վարքագծով: Նրանք անդամակցում են մասնաճյուղում գործող ուսանողական ինքնակառավարման կառույցներին:

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհրդի կազմը հավանության արժանացրեց 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացողների կազմը և երաշխավորեց ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

Ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին - Հավանության արժանացնել 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի «Շավարշ Մարգարյան» «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակների հավակնորդներ Լուիզա Մադաթյանի և Իննա Ենգիբարյանի թեկնածությունները, «Վազգեն Սարգսյան» «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակի հավակնորդներ Իրա Վարդանյանի, Դիանա Սանթրոսյանի թեկնածությունը և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

4. Ընթացիկ հարցեր.

4. 1. Լսեցին. - Գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով ԵՊՀ ԻՄ «Տավուշ» գիտահետազոտական կենտրոնի մրցութային հանձնաժողովում ֆակուլտետի ներկայացուցչի առաջադրման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդի որոշմամբ «Տավուշ» գիտահետազոտական կենտրոնի դրամաշնորհի հատկացման մրցութային հանձնաժողովում պետք է ընդգրկվի ֆակուլտետի մեկ ներկայացուցիչ: Ֆակուլտետի դեկանի պաշտոնակատարը առաջարկեց Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ Գարիկ Սիրոյանի թեկնածությունը:

Արտահայտվեցին- բոլոր անդամները

Արտահայտվողները դրականորեն բնութագրեցին թեկնածուին՝ ընդգծելով նրա համապատասխանությունը վերոհիշյալ պաշտոնին:

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտախորհրդի կազմը հավանության արժանացրեց Գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով ԵՊՀ ԻՄ «Տավուշ» գիտահետազոտական կենտրոնի մրցութային հանձնաժողովում առաջադրել Գարիկ Միրոյանի թեկնածությունը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին՝- Գիտական դրամաշնորհի հատկացման նպատակով ԵՊՀ ԻՄ «Տավուշ» գիտահետազոտական կենտրոնի մրցութային հանձնաժողովում առաջադրել Գարիկ Միրոյանի թեկնածությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան